

ալիր, հերն անիծած, որ չիփ-չիփլախ էլ ըլիմ, գարդանեմ։ Օչազս լիքը ըլի, տանս՝ բարաքեաթ, որդիքս՝ սաղսալամաթ։ Թող օրը հազար մարդ մտնի, հազար մարդ գուս գայ, ինչ եմ հոգում, հացն Աստծունն ա, ես էլ հետը, ով հասնի, թող ուտի։ Տէրին փառք, տեղը հլաշատ կայ, տղեքս սաղ ըլին, ջանս ապրի։ Աստուած իր ստեղծած բանգի որդղը ինչպէս կը կտրի։ Գդակս ծուռը կղնեմ, քէֆս արամիշ կանեմ։ ով թամբալ ա, թող նա գարդ անի»\*)։

(շաբունակելի)

**Թ. Աւդալրէզեան**

### ԿԱՆՑԻ ԻՄԱՅՈՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

#### 1. Էմալիրիզմի պատմութիւնը.

Էմալիրիզմը յունական շրջանում սկսեց զարդանալ յանձնանս սովիեստների և իւր կեանքի հենց այդ առաջին շրջանից երեան հանեց իրեն յատուկ թոյնը—սկեպտիցիզմը։—Հկայ օբեկտիւ ճշմարտութիւն, «Մարդը, փոփոխական, յեղյեղուկ և իւր բոպէական տրամադրութիւններին և վիճակներին գերի մարդն է ճշմարտութեան չափը», ահա նրանց ընորոշ բանաձեւը։

Էմալիրիստիկ գծեր կային ըաւական չափով նաև Արիստոտելի, այսուհետեւ շատ խոշոր չափով էպիկուրեանների և ստոյիկեանների մէջ։ Ոակայն Էմալիրիզմը մեծապէս զարդացաւ միայն նոր գարում, այն էլ գլխաւորապէս Անգլիայում։

Նոր գարու սկիզբն Էմալիրիզմի գլխաւոր ժողովրդականացնողն հանգիստացաւ Կանցլեր Բէկոն, թէև նրանից առաջ նրա անուանակից Ռոժեր Բէկոնը և ուրիշները արծարծել էին նոյն սկզբունքները։ Բէկոնը ոչ թէ սաեղծեց Էմալիրիստիկ

\*) «Վէրը Հայաստանի», եր. 37.

փելիսովայութեան սիստեմ, այլ միայն տաղանդաւոր ցուցումներ և մեթօգներ տուաւ ինդուկտիւ վորձի և գիտութեան համար, որոնք միայն կարող են ազբիւր ժառայել մեր իմացութեան, իսկ մետաֆիզիկան, որը չի հիմնւում դրանց վրայ, զուրկ է իմացական արժեքից, ուրեմն և դոյութեան իրաւունքից:

Լոկիր զարգացրեց Յեկոնի հիմնական սկզբունքները և իմացարանական խոշհպատճութիւնները գարձրեց փիլիսովայութեան գլխաւոր առարկայ.— Նրա ամբողջ տեսական փիլիսովայութիւնը իմացարանական հարցերի շուրջն է պայտա գալիս և համարեա բոլոր կարենոր դնուուչութիւնական հարցերը գնում է, թէ և նրանց լուծելու ժամանակ հոգեթանութիւնն է միջամասում: Ըստ Լոքի մեր ամբողջ իմացութեան պաշտըն ստացւում է 2 ճանապարհով միայն—արտաքին և ներքին զգայութիւններով—սենսացիայից և ռեֆլեկցիայից: Միտքը, քանի գեռ նա փորձի այդ երկու աղբիւներին չի ենթարկուած, նման է մաքուր թղթի, որի վրայ փորձը ներքին և արտաքին զգայութիւնների միջոցաւ գծում է իր նշանները: Իմացութեան հիմնական տարրերը, որ կատարում են վերոյիշեալ 2 ճանապարհով, 4 կարդի են բաժանուում:— 1. արտաքին մի զգայութիւնից առաջացածներ (լոյս, ձայն, հոտ, համ, տաքութիւն): 2. մի քանի արտաքին զգայութիւններից առաջացածներ (տարտծութիւնու շարժումն, ձեւ և լին): 3. ներքին զգայութիւններից առաջացածներ (ամենալիութիւն՝ տհաճութիւն, ակտիւութիւն, գոյութիւն, միւթիւն): Այս 4 կարդի «պարզ» պատկերացումներից կոմըենացիաներից կաղմուում են բաղադրեալները (գաղափարներ, իրեր, յարաբերութիւն և այլն):

Իսկ ինչ վերաբերում է իմացութեան արժեքին, ըստ Լոքի ներքին զգայութեամբ տրւում է հոգեկան իսկական և անմիջական իրականութիւնը, հոգեկան աշխարհի գոյութիւնը անմիջականորէն ճշմարիտ է և անկատկածելի: Իսկ արտաքին զգայութիւններից յատկութիւններին, որոնք վերաբերում են իրերի «առաջնակարգ» յատկութիւններին, որոնք են՝ տարածականութիւնը, ժամանակը, շարժումն ու դադարը, ձեւը, նիւթեղէնութիւնը, տալիս են իսկական իրականութիւնը: Իսկ նրանք, որոնք վերաբերում են «երկրորդական» յատկութիւններին, որոնք են՝ լոյս, ձայն, գոյն, հոտ, և լին, օրեկտիւ նշանակութիւն չունեն: Իրերի յատկութիւնները վերաբերում են մի կրող սուբստանցիայի: Որը ոչ միայն մեր իմացութիւնից խուսափում է, այլ մինչեւ անդամ

նրա գոյութիւնն էլ բացարձակ կերպով չի կորելի ապացուցել։ Իսկ սլատճառականութիւնը իրերի մէջ դործող ու էալ ուժ է, նրա առաջացրած գործողութիւնից ստացւած արդիւնքը է հետեւանք։

Լօքի փելիսոփայութիւնը երկու ուղղութեամբ կարող էր զարգանալ՝ նաև՝ կարող էր կասկածի ենթարկուել ունուցիայի և ուժի բոխայի հաւասարագործեքութիւնը։ ԶԵ՞ որ ուժութեան կարող է զարգանալ նախօրօք ստացած զգայութեան (արտաքին) վրայ, որը ստացւում է արտաքին ազդեցութիւնից և որը կազմում է մեր մաքի ամբողջ բովանդակութիւնը ու հիմքը։ Իսկ այդ արտաքին ազդեցութիւնը զուտ մեքենայական է և օրեկտիւ։ Մաքի այս ընթացքը զարգացնելով ֆրանսիացի ազատամիտ փելիսոփաները կառուցին մատերիալիստական մետաֆիզիքական մի աշխարհայեցք։

Երկրորդ կարող էր զառւել և զարգանալ Լօքի էմպիսիզմը գէպի սուրեկտիվիզմ՝ համարելով առաջնակարգ և երկրորդական յատկութեանց տարրեցութիւնը և առաջիններին օրեկտիւութիւն վերտղրելը մի քմահաճ անհիմն նախագրեալ և ընդունելով, թէ բոլոր յատկութիւններն էլ մեր պատկերացումներն են։ Այս վերջին ուղղութիւնը ըստեց Բերկլին։

Ըստ Բերկլիի պատրանք է և խելագարութիւն ընդունել արտաքին յատկութիւններին կրող նիւթական սուրստանցիա, որովհետեւ նիւթը իւր բոլոր յատկութիւններով մեր պատկերացումն է, ուրեմն կան միայն պատկերացումներ և նրանց պատկերացնող հոգիներ։ Իսկ թէ որտեղից են առաջանում այդ պատկերացումները, պարզ է ըստ Բերկլիի, որ անպայման հոգեոր էակից, որովհետեւ հոգեորը կարող է միայն հոգեկան երեսյթի պատճառ լինել, մոածում է Բերկլին ռացիօնալիզմի ազդեցութեան տակ։ Իսկ այդ հոգեկան էակն Առառւած է, որ առնչութեան մէջ է ինդիվիդուալ հոգիների հետ։

Սակայն Բերկլին էլ զերծ չէր մետաֆիզիզքական նախադրեալներից, որովհետեւ նա ընդունում էր Աստուծոյ դոյլութիւնը որպէս ու էալ պատճառ մեր պատկերացումների։ Նիւթը դէն ձգեց մետաֆիզիքական այդ վերջին մնացորդն էլ մործնական փելիսոփայութիւնից և զտեց և զարգացրեց սուբեկտիւիզմը։ Երբ էմպիսիզմը զառւեց գոգմատիքական տարրերից վերջնականորէն, սկզբանցիզմը, որ նիրհում էր էմպիրիզմի մէջ և կաշկանդւած էր գոգմատաիկ տարրերից, ամբողջ թափով արձակուեց անարդել և ամբողջովին վարակեց էսպիրիզմի օրգանիզմը։ Միւս կողմից ծայրայեղութեան է հասնում նոմենալիզմը։ Ըստ Հոգմի մեր ամբողջ իմացութեան հիմքը կազ-

մում են տպաւորութիւնները, իսկ երբ տպաւորութիւնը (զգայութիւն, ըմբռնութիւն) վերաբարագրում է, ստացւում է մտապատկեր. այսպիսով իւրաքանչիւր մտապատկեր կամ «իդէալ» ունի իր համապատասխան զգայութիւնը: Երբ մենք մի մտապատկեր չենք վերագրում իրեն համապատասխան զգայութեանը՝ առաջանում է մոլորութիւն: Այդպիսի մոլորութիւն է ընդունել սուբստանցիայի գոյութիւնը: Երբ մենք տեսնում ենք, որ մի քանի զգայութիւններ յաճախակի միացած են հանգիս գալիս, մենք տրամադրուում ենք ընդունել այդ միացեալ կոմպեքսի թանձրացեալ և անշարժ յարակայութիւնը, այսինքն ընդունել սուբստանցիայի գոյութիւնը. մինչդեռ ոչ մի օրինական հիմք չկայ սուբեկտիւ տրամադրութեան «սովորոյթին» օբեկտիւութիւն վերագրել: Նոյնպիսի մոլորութիւն է ընդունել պատճառականութեան օբեկտիւութիւնը: Երբ մենք յաճախակի նկատում ենք, որ ա-ին ե-ն է յաջորդում, սովորում ենք կամ տրամադրուում ենք սպասել, թէ ա-ին միշտ էլ ե-ն պետք է հետեւ Ոչ մի հիմք չկայ, ըստ Հիւմի, ընդունել, թէ որովհետեւ ա կայ, ուստի անհրաժեշտաբար պիտի լինի և Ե. Ի՞նչպէս հետեւցնենք, ինչքան էլ մենք մանրամասն վերլուծենք ա-ի պարունակը, երբեք չենք կարող նրա մէջ և գտնել և նրանց հետեւցնել: հետեւաբար ոչ մի հիմք չկայ ա-ի և Ե-ի մէջ անհրաժեշտ առնչութիւն գնելու. մենք մեր սուբեկտիւ սովորոյթին անօրինական կերպով անհրաժեշտութիւն և օբեկտիւութիւն ենք վերագրում:

Սկեպոփից զերծ չի մնում նոյն իսկ բանականութիւնը: —Մենք հակուած ենք բանականութեան ասածները ճշմարիտ ընդունելու, բայց այդ վստահ հակումը կարող է մեղ խարել: Բայց արդեօք կասկածելի չէ նոյն այդ կասկածը բանականութեան վստահելիութեան վերաբերմամբ. սակայն, ըստ Հիւմի այդ կասկածելիութիւնը գեռես չի երաշխաւորում բանականութեան վստահելիութեան մասին:

Սակայն ըստ Հիւմի այս տեսական ոկեպտիցիզմը չի կարող արգելք հանդիսանալ, որ մենք դորձնականութեան հաւատանք և օդտուենք պատճառականութեան սկզբունքից, որպէս մի յարմար միջոցից՝ մեր տւեալ փորձնական գէպքերը կարդաւորելու և մեր կեանքի նպատակներին ծառայեցնելու, և բանականութիւնից, իբրև տմհնավստահելի ուղեցոյցից, մեր գործնուկան ընթացքը զեկավարելու:

Այսպիսով էմպիրեզմը զարդանալով ընականաբար ինքն ինքնառջնացման յանդեց Հիւմի «զուտ վորձի» սիստեմաւմ:

Նախ քան գնահատական վերլուծութեանը անցնելը՝ թռուցեկ տանը ու ացիօնալիդրի պատմական զարդացման կարևոր հանդոյցների ընդհանուր ուսուագծերը:

## 2. Աւացիօնալիզմի պատմութիւնը.

Յունական փիլիսոփայութեան սկզբնական շրջանում, եթք սկսուեց խախտուել հաւատը գէպի օրգանների վստանելիութիւնը և երբ քննադատական ոգին զարթնեց, սկսեցին նախապատմութիւն տալ քանական իմացութեանը, իսկ զգայաբանական իմացութիւնը համարել խաւար և պղտոր:

Ըստ Առկրատի և Պլատոնի տրամաբանական—գիտական կական իմացութիւնն է արժէքաւորը; Արիստոտէլի մէջ էլ գերակշռողն է ու ացիօնալիուտական ոգին:

Սակայն հին գարե փիլիսոփայութիւնը աւելի գոյաբանական ընոյթ ունի, իմացութեան խնդիրը յատուկ ուշագրութեան չի առնեւում: այն ինչ նոր դարը սկզբեց և եթ առանձին հետաքրքրութիւն ցոյց տուաւ գէպի իմացաբանութիւնը և փիլիսոփայական խորհղածութեան նիւթ զարձրեց, և հէնց գրանով էլ նա, ի միջի այլոց, տարբերւում է հին փիլիսոփայութիւնից: Աւացիօնալիդրը իւր զարդացման հասուն շրջանը թեակոլիսեց միայն նոր դարում: Նոր գարու ու ացիօնալիդրի հայրն եղաւ Դեկարտ: Մատեմատիկան, յատկապէս երկրաչափութիւնը ունենալով որպէս բացանձակ գիտականութեան նմուշ, որը մի քանի ամենապարզ և ակնյայտնի տքսիօմաներից դեպուկտիւ եղանակով զարդացնում է մի ամբողջ գիտական սկստեմ, փիլիսոփայութիւնը պիտի կառուցանէ իւր աշխարհայեացքը, հետեւցնելով և զարդացնելով այն մի քանի աքսիօմատիկ նախագրեալներից: Փիլիսոփայութիւնը պիտի գտնէ նախիւր այդ աքսիօման: Փիլիսոփայութեան համար այդ աքսիօման է, ըստ Դեկարտի, ինքնագիտակցութեան հաւասարութիւնը և մեր սեփական «Ես»-ի, որպէս գիտակցող և մտածող էակի գոյութիւնը: Աս կամ իրքե մտածող էակ, այդ անկատկած է, արտաքին աշխարհի գոյութիւնը և մինչև անգամ մտակեմատիկական թէզերը կարող են մոլորութիւնն համարուել և կառկածի ենթարկուել, բայց այդ մոլորութիւնն ու կատկածը երենց կողմից ոչ այլ ինչ են, եթէ ոչ մտապատկերներ իմ մէջ, մտածութիւններ «Ես»-ի: Իսկ մտածել նշանակում է հանդէս դալ որպէս իրականութիւն, մտածութիւնն էլ իրականութեան մասն է, արտայայտութիւններից մէկը: Հետեւը եթէ առ

մտածում եմ, նշանակում է ես գոյութիւն ունեմ որպէս մտա-  
ծող էակ. — cogito ergo sum. իսկ այդ գոյութիւնը անկատկած է,   
ինչ չտիրով որ անկատկած է մտածութիւնը, ինքնագիտակցու-  
թիւնը: Այնուհետև պարզ է և անկատկած, որ մենք ունենք  
ամենակատարեալ և ամենաիրական էակի գաղափար, որի ժագ-  
ման պատճառը մենք, իբրև անկատար էակներ, չենք կարող  
լինել որովհետև հետեւանքի մէջ չի կարող աւելի բան պարու-  
նակուել, քան ինչ որ կայ պատճառի մէջ, ուստի պարզ է,  
ըստ Դեկարտի, որ նոյն ինքն այդ էակն է պատճառը մեր մէջ  
նրա մասին եղած գաղափարի: Ուրեմն հաստատուած է ամե-  
նակատարեալ և ամենաիրական էակի՝ Աստուծոյ գոյութիւնը.  
իսկ Աստուած որպէս ամենաճշմարիտ և ամենաբարի էակ, չի  
կարող մեզ մոլորեցնել և խարել, ցոյց տալով մեզ այնպիսի  
երեր, որոնք գոյութիւն չունեն, զբանով նա իւր գաղափարին  
հակառած կլինէր: Այսպիսով արտաքին աշխարհի գոյութիւնն  
անկառկած է և այնպէս է, ինչպէս մեզ երեւմ է: Այժմ ար-  
դէն Դեկարտի սացիօնալիստիկ մտածողութիւը ծայրայեղ կառ-  
կածեց, որ կարող էր սուխափողմի յանդել մինչև անդամ, հա-  
սաւ այն զրութեանը, որ այլևս գժուար կը լինէր բացատրել մո-  
լորութեան հնարաւորութիւնը: Եթէ Աստուած չի խարում  
մեզ, հապա ի՞նչպէս է առաջանում մոլորութիւնը: Դեկարտը  
զբան պատասխանում է. — մոլորութիւնը առաջանում է ոչ թէ  
Աստուծոյ պատճառով, այլ մեր, երբ իմացութեանը միջա-  
մտում են զգայական պղտոր տարրերը, իսկ յատուկ մտածո-  
ղութեան շնորհիւ նա (մոլորութիւնը) վերանում է:

Հաւատը, թէ մատեմատիկական մտածողութեան օրէնք-  
ները միաժամանակ և ըստ ինքեան աշխարհի օրէնքներ են, որ  
քանականութեան՝ պատկերացումների աշխարհում կատարած  
արերացիաները յատուկ վերաբրտագրութիւն են ինքնին իրակա-  
նութեան հիմքում գործող օրէնքների և որ արտաքին աշխարհի  
օրէնքները զիգուկտիւ եղանակով բղխում են աքսիսմա սուբ-  
ստանցիալից, ծայրայեղութեան հասաւ Սպինօզայի, այդ  
ամենատիպիկ և յստակ զոգմատիկ սացիօնալիստի մէջ, որը  
մինչև անդամ կարիք էլ չի համարում իմացարանական-փելի-  
ոսփայական խորհրդածութիւններով հիմնաւորել իմացութեան  
օբեկտիւ նշանակութիւնը, այլ անմիջապէս ձեռնարկում է կա-  
ռուցանել իւր ատարիքուակիւ մոնիզմի կուռ և ամբողջական  
գեղեցիկ մետաֆիզիքական սիստեմը:

Սացիօնալիստական իմացարանութիւնը իւր լեզնական  
զարդացումն ու մետաֆիզիքական հիմնաւորումն ստացաւ  
Լայքին եցի միջոցաւ: Մոնադաներն են ըուն սուբստանցիա-

ները, — հոգեսոր ինքնանկախ ատոմիներ, որոնց էութիւնն արտաքայտում է հոգեսոր գործունէութեանց — պատկերացման և ձգտման մէջ: Հոգեսոր կեանքը, որը միակ կեանքն է, չի սպառւում դիտակցութեամբ, ինչպէս Գեկարտն է կարծում: զիտակցութիւնը միայն բարձր կարգի հոգեկան կեանքն է, կայ նաև անդիտակցական հոգեկան կեանք, որը նոյն դիտակցական կեանքն է, միայն պղասը դրսւթեամբ: Անօրդանական աշխարհը ներկայացնում է մինիմում դիտակցական և մաքսիմում անդիտակցութեան վիճակը, իսկ Աստուծոյ մոնագան բացարձակ պարզ և յատուկ գիտակցութեան վիճակը, իսկ դրանց միջև ծաւալւում է անդիտակցականից դիտակցականն անցնող բայութ համարաւոր վիճակները, որոնց կը սղները տռանձին մանագաներն են, որոնք մի անընդհանուր էն կազմում անդիտակցականից դէպի գիտակցականը: Խւրաքանչեւը մոնագ մի միկրոսոսում է, մի փոքրիկ տիեզերք, որ ներկայացնում է մակրոկոսմոսի — մեծ տիեզերքի էութիւնը: Նա հայելի է, որի էութեան մէջ կարող ենք դանել ամբողջ աշխարհը ցոլացւած: Բայց այս ցոլացումը չի առաջանում այն ձևով, որ մոնագներն աղջում են միմեանց վրայ և իրաը մէջ պատկերացումներ են գոյացնում: — մոնագները գոներ և պատուհաններ չունեն, որ պատկերացումները գուրս դան մի մոնագից և մանեն ուրիշի մէջ: Հոգեկան գործունէութեամբ է սպառւում իրականութիւնը, իսկ այդ գործունէութիւնը և նրա արգելութեամբ՝ պատկերացումները միայն կարող են ես-ի մանադայի մէջ գոյութիւն ունենալ: Նրանից չեն կարող դուրս դալ, մանել ու ըիշե մէջ: Արդ՝ եթէ առանձին մոնագան ունի իւր առանձին անկախ գործունէութիւնն ու կեանքը և ոչ մի կերպ չի կարող ազգւել միւսից, ապա ինչպէս նա կարող է հասու լինել միւսների գոյութեանը: Խնդնագոյութեան խնդերը ինքն բոտինքեան հասկանալի է և անկատկած Լայքնիցի համար: այստեղ նա կանգ է առնում նոյն դժուարին հարցի հանգէպ, ինչ որ Գեկարտը: — Ինչպէս հաստատել արտաքին իրականութեան գոյութիւնը և վստահ լինել, թէ նա համապատասխանում է մեր իմացութեանը: Լայքնիցն այսպէս է բացատրում և հիմնաբանում այդ: — Աստուած երբ նոր ստեղծեց \*մոնագաների այս սիստեմը, աշխարհը, որ սկզբում միայն մտածութիւնն էր, նորա մէջ, նախօրօք այսպէս սահմանեց, որ մէկի պատկերացումը, անկախ գործունէութիւնը համապատասխանէ միւսին, այսպիսով մի մոնագան կարող է վերահասու լինել միւսների գոյութեանն ու գործունէութեանը: Այս նախառ հման ներդաշնակ է թիւ թիւնը միայն մի մաքաբանական սկզբունք չէ, այլ

համատիեզերական, իսկ իմացաբանական—հոգեբանականը նրա մասնակի կիրառութիւնն է: Ահա այսպէս է լուծում ևայբնիցը իմացութեան օբեկտիւութեան հարցը: Իսկ ինչ վերաբերում է իմացութեան ներքին իմանենտ պարբերութեանց և արժեքաւրութեանց՝ ևայբնիցը երկու կարգի է բաժանում իմացութիւնները—փաստի իմացութիւն, որը փաստական ճշմարտութեանն է վերահասու լինում զգայութեանց օդնութեամբ, և բանական իմացութիւն, որը թափանցում գանում է յաւետենական ճշմարտութիւնը: Առաջին կարգին պատկանում են բոլոր փորձնական ինդուկտիւ գիտութիւնները (բնագիտութիւն և ուրիշները), երկրորդին բոլոր մտածապէս անհրաժեշտ գիտութիւնները (մատեմատիկա, մետաֆիզիկա, լօգիկա): Փաստի իմացութիւններն հիմնւում են զգայնականութեան, իսկ յաւետենական ճշմարտութիւնները՝ զուտ բանականութեան վրայ: Սակայն զգայութիւնը ոեռապէս տարբեր չէ բանականութիւնից, նա ևս մտածութիւնն է միայն պղտոր և խճճուած դրութեամբ, որ յատուկ է մեզ, որպէս անկատար էակների և որ վերանում է Աստուծոյ մոնադայի մէջ, որ աբովիւտ պայծառ է և յատակ ուստի ինչ որ մեզ համար երեւում է փաստի ճշմարտութիւն, այսինքն զգայական և ալօգիկ մի բան, Աստուծոյ համար մտածապէս անհրաժեշտ է: Բանական ճշմարտութիւնները, եթէ արտայայտենք Աանտի աերմիններով, apriori անալիտիկ գատողութեանց վրայ են հիմնում, նրանց ոկզրունքն է հակասութեան կամ նայնութեան օրէնքը: Իսկ փաստի ճշմարտութիւնները հիմնւած են բաւարար հիմնաւորման էմպիսիկ ինդուկտիւ ոկզրունքի վրայ, այսինքն առօտիոր սինտետիկ դատողութիւններ են:

Քանի որ ճշմարտութեան միակ կրիտերիումը ակնյայտնի պարզութիւնն է ըստ ռացիօնալիզմի, այնուհետև դժուար չէ հասկանալ, թէ ինչու Վոլֆի Էկլեկտիկմից յետոյ, որը ձգտում էր հաշաեցնել ռացիօնալիզմն ու էմպիրիզմը զուտ զուտ ձեւական մերձեցումով, ռացիօնալիզմի յանդեց «մարդկարին առաջը դատողութեան» գոեհիկ փիլիսոփայութեանը, որը իւր աշխարհայեցքին իրեւ հիմնաւոր վերցնում էր ժողովրդի մէջ ընդհանուր դարձած այսպէս կոչւած պարզ «ճշմարտութիւնները» իսկ թէ ընթացիկ կեանքը այդ «ճշմարտութիւններն» ստանալու որքան ոչ իմացական ձեռքեր են միջամտում, ուզքան կեանքը և կամքը իրենց պահանջներով խեղզում են իմացութեան անտարբեր օբեկտիւութիւնը, այդ ի նկատի չէր առնւում և չէր գիտակցուում: